հազար թումանի ինչս գոհարեղէն ընծայս բերեալ է իմ վասն տէրութեանդ։ Դարձեալ եհարց ի նմանէ ասելով որպիսի՞ կամօք գտեր զհայս ի Շամախի և ի Շիրվան։ Առ որ պատասխանեաց դեսպանն այն ասելով, թէ ի մէջ տասն կամ չորեք տասան աւուրց մինչ դեռ անցանէաք անտի, ութեւտասան հազար զինաւորեալ հայս գումարեցան ի վերայ իմ, կարծելով թէ տէրութիւն ձեր առաքեալ է զիս իբրու գլխաւորս լինիլ նոցա։ Յաղագաս որոյ յոյժ ուրախացեալ, արքային ասաց ցտմարդի դեսպանին, ահա զոր ինչ բերեալ ես վասն իմ, այն իսկ քեզ լիցի, յաղագս ծախին քում, արդէն երթ և գնեայ քեզ, զոր ինչ կամիս, քանզի զկնի աւուրց քառասուն հազար զօրաց պետ եմ կարգեցեալ զքեզ երթալ ի Հայաստան։

Յայնժամ վատթարն այն իբրև զայս բան լուաւ, տկսաւ լալ և ասել, թէ ինքն վաճառականի որդի վաճառական է և անհնարին է նմա յանձն առնուլ այնպիսի գործ, զոր յառաջադրէ, ապա զայրացեալ յոյժ թագաւորին և ի սաստիկ ցասմանէ անտի, ոստեաւ ի տեղւոջէ իւրմէ և ել արտաքս վասն հանգուցանելոյ զսիրտ իւր ի ցանմխիթարութենէ անտի, որ ոչ գտաւ ոք ի մէջ այնքան հայոց արի և խոհեմ։ Զայս ամենայն համբաւս ընթերցեալ է մեր ի պատմութեան շահն Շահնազր բռնաւորին, արարեալ ի մստր Հանվէ յանգլիացւոյ[20]։

Այլև ի ժամանակի Պետրոս արքային հայք տասնապատիկ առաւելս էին, քան զայժմս, և մէլիքեանքն Ղարաբաղու բաւական շատացեալս էին զօրօք և բովանդակ Նախիջևան և Երևան լի էր հարուստ վաճառականօք, որովհետև յայնմ ժամանակի մէն մի այր իսկ ոչ երևեցաւ ի Հայաստան աշխարհի նախանձախնդիր ազգին, զի՞ արդ է կարելի, զի այժմս գտանիցի այնպիսի ոմն, որ հեղինակ լիցի զբարի դիտմանցս մերոց։ Ուրեմն անկէ և պատշաճ, զի ամենայն հայք, որք են ի կողմանդ այրմիկ միահաղուն ժողովեսցին և հաստատեսցեն զմանսար[21] և կնքեսցեն ամենեքեան և առաքեսցեն ի սուրբ էջմիածին առ սրբազան կաթուղիկոսն և խնդրեսցեն ի նմանէ, որ ինքն իսկ ձեռնադրեսցէ և կնքեսցէ հանդերձ ամենայն եպիսկոպոսօք իւրովք, որք են անդ, զի հրամանաւ ամենափայլ թագուհւոյն իւրեանց առաջնորդ կարգեսցեն զքնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտէմկինն։

Զայս ամենայն տեսեալ թագուհւոյն մեծի, յոյժ մեծաւ սիրով հաճեսցի, ապա թէ կարելի լիցի յայնժամ հայոց հեշտութեամբ ազատել և զերծանել ի լծոյ անօրէն բռնաւորաց. «եթէ ոչ, բուաբադան օղուլ օլմազ»[22]։ Այսինքն ի յաղգէն հայոց ի մէջ հարիւր ամաց և ոչ գտանիցի այնպիսի ոմն, զի կարօղանայցէ ի մի վայր հաւաքել զժողովուրդս իւր, որպէս ասէ. «ուր ֆալլու հափսի բիր հալլու»[23]։

Ահա վեց հարիւր և եօթանասուն ամք են, յորմէ հետէ իբրև զգերի հպատակ են եղեալ այլ և այլ ազգաց, և անդստին բնութիւնք նոցին այն են, որ առաւել օտարասէրս են, քան զիւրասէր, նմանին սկլաւոնացւոց կամ լիւրիկեցւոց, որք յօժարին յաւետ ծառայել էլէնտիկցւոց հնարագէտ ժողովրդապետական քաղաքացւոց, քան ունել ինքեանց կառավարող, առ այս դէպ է մեզ ի մտաւ ածել զբանն ի ճարտասանութեան հայր Ստեփաննոսին, էրես 505, յօդուած Դ։

Դիւրաւ յարին յօտար ազգս նուաստ և անշուք համարելով զազգս մեր, ուստի և յոլովք ի տեղիս տեղիս ոչ ախորժեն հայ անուանել զանձինս։ Ահա պատճառ հիւանդութեան ազգին բարւոք ասաց և եթող ընթերցողաց գտանել զնոսխայն[24], այն էր, զոր ի վերոյ համարձակեցայ խոնհարաբար հարևանցիկ ոճիւ մատուցանել առաջի գերամեծար տէրութեանդ, յորմէ խնդրեմ ներումն սիրոյդ առանց ձանձրանալոյ։ Քանզի դու միայն կաս ի մէջ ամենայն հոգևորաց իբրև զհայր գթած, որ գալարի աղեօք և յաւետ լսէ զձայն յառաջանաց որդւոց իւրոց։

Բաղում բանս ունիմ ասելոյ, ընդ որ հոգիս յօժար է և մարմինս տկար, երանի թէ բաւականապէս հմուտ լինիցէի հայկական լեզուի, նման Աբբայանց միաբանից, ապա թէ յայնժամ կարօղանայի իսկապէս բացայայտել զխորհուրդս սրտի իմոյ, գո՞ւցէ թէ ճարակ ինչ լինիցէր և բուժիչ ախտացե-